

# ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՃԱԿԱՏՈՒՄ

## «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՈՒՄ

*Դեկտեմբերի 9-ին և 12-ին Մոսկվայում ակադեմիկոս Դ. Վ. Սկոբելցինի նախագահությամբ տեղի ունեցան «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակների կոմիտեի նիստերը։*

*Կոմիտեն քննության առավ ընթացիկ տարվա համար Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու վերաբերյալ ստացված առաջարկները և որոշում ընդունեց այդ հարցի առթիվ։*

*Ստորև հրապարակվում է «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհելու վերաբերյալ կոմիտեի որոշումը։*

## «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» 1953 ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

### «ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻՋԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆՆ ԱՄՐԱՊՆԴԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՍՏԱԼԻՆՅԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ 1953 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՈՐՈՇՈՒՄԸ

*Խաղաղության պահպանման և ամրապնդման համար մղվող պայքարի գործում մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար «Ժողովուրդների միջև խաղաղությունն ամրապնդելու համար» Միջազգային Ստալինյան մրցանակներ շնորհել հետևյալ անձանց.*

ՊՅԵՐ ԿՈՏԻՆ— *Ազգային ժողովի դեպուտատ (ՖՐԱՆՍԻԱ).*

ՍԱՀԻԲ ՍԻՆԳ ՍՈԿՀԵՅԻՆ— *պրոֆեսոր, գեներալ-մայոր, Հնդկաստանի պառլամենտի Նահանգների խորհրդի անդամ.*

ԱՆԴՐԵԱ ԳԱՋԵՐՈՅԻՆ— *քահանա (Իտալիա).*

ԻԶԱԲԵԼԼԱ ԲԼՅՈՒՄԻՆ— *պառլամենտի դեպուտատ (Բելգիա).*

ՀՈՎԱՐԴ ՖԱՍՏԻՆ— *գրող (ԱՄՆ).*

ՋՈՆ ԲԵՐՆԱԼԻՆ— *Լոնդոնի համալսարանի պրոֆեսոր (Անգլիա).*

ԼԵՈՆ ԿՐՈՒՉԿՈՎՍԿՈՒՆ— *գրող (Լեհաստան).*

ՊԱԲԼՈ ՆԵՐՈՒՏԱՅԻՆ— *գրող (Չիլի).*

ԱՆԴՐԵԱ ԱՆԴՐԵԵՆԻՆ— *բժշկականության դոկտոր, Ստոկհոլմ քաղաքի կլինիկական լաբորատորիայի գլխավոր բժիշկ (Շվեդիա).*

ՆԻՆԱ ՎԱՍԻԼԵՎՆԱ ՊՈՊՈՎԱՅԻՆ— *Պրոֆմիությունների համամիութենական կենտրոնական խորհրդի քարտուղար (ՍՍՌՄ)։*

**Կոմիտեի նախագահ՝** Դ. Վ. ՍԿՈԲԵԼՑԻՆ

**Կոմիտեի նախագահի տեղակալներ՝** ԳՈ ՄՈ-ԺՈ *(Չինաստան),*
ԼՈՒԻ ԱՐԱԳՈՆ *(Ֆրանսիա)։*

**Կոմիտեի անդամներ՝**

Մ. ԱՆԴԵՐՍԵՆ-ՆԵՔՍԵ *(Դանիա),*
ՅԱՆ ԴԵՄԲՈՎՍԿԻ *(Լեհաստան),*
ՄԻԽԱՅԼ ՍԱԴՈՎՅԱՆՈՒ *(Ռումինիա),*
Ա. Ա. ՖԱԴԵԵՎ *(ՍՍՌՄ),*
Ի. Գ. ԷՐԵՆԲՈՒՐԳ *(ՍՍՌՄ)։*

*12 դեկտեմբերի 1953 թվականի,*
*քաղաք Մոսկվա։*

(«ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ», 22 դեկտեմբերի 1953 թ.)

